



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

<<03>> 02 2014թ.

N 36

ք. Արմավիր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՄԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Քաղաքացիական պաշտպանության մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածով, <<Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի առաջին մասի <<ա>> ենթակետով և Հայաստանի Հանրապետության Նախագահի ՆՀ-728 հրամանագրի 1.22 կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Արմավիրի մարզային փրկարարական վարչության պետի 2014 թվականի հունվարի 15-ի թիվ 15/23 գրությունը.

ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի բնակչության պաշտպանության համակարգի նախապատրաստման 2014 թվականի հիմնական միջոցառումների պլանը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝

Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ